

Aršin Mal Alan / zowart  
brt. ors Arar. Kovkasean  
Tatarakan Keankn \* . .

[...]

Aršin Mal Alan / zowart brt. ors Arar. Kovkasean Tatarakan Keankn \* . . . 1925 \* 1925 \* 1925.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquez [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment possible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).

2666

«ԱՐԵՒ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ — ԹԻՒ 8

# ԱՐԵՒ ՄԱԼ ԱԼԱՆ

ԶՈՒԱՐԹ ՕԲԵՐԵԹ

ԿՈՎԿԱՍ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԵ

ԶՈՐՍ ԱՐԱՐ



Հրատարակութիւն

**Ա. Ր. Ե. Ւ.**

B. P. 558

STAMBOUL

Տպագրութիւն

**Ա. Ր. Ե. Ւ.**

Պապը Ալի ճամսէսի, 73

Կ. ՊՈԼԻՍ

1925



«ԱՐԵՒ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ — ԹԻՒ 8

---

# ԱՐԵՒ ՄԱԼ ԱԼԱՆ

ԶՈՒԱՐՓ ՕԲԵՐԵՓ

ԿՈՎԿԱՍ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԵ

ԶՈՐԾ ԱՐԱՐ




Ա. ՊՈԼԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒ




1925

2010-76607





## ◆ ԱՐՃԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ ◆



Ա. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Բեմը կը ներկայացնէ Ասկեարի տունը . հարուստ ,  
կահաւորուած , վարագոյրը բացուելիս , Խալան ծխում  
է , իսկ Ասկեարը երգումէ «Սէգեան» :

Ասկ. — Ա՛խ , միքէ կը նարուի՞ այս աշխարհում  
ինձ նման դարդոս մի մարդ .

Հալ չմնաց ինձանում  
Մնալով այսպէս մինակ :

Ախ միքէ տատ պէ՞ս՞ է տեւէ  
Այս իմ չարչարանքը  
Ծնւեցի ես երեւի որ  
Մենակ անցնի իմ խեղճ կեանքը :

(Դառնալով Խալային)

Դարդերիս մի նար զտիր , խալա , խալա ,  
Տանջւում եմ ինձ ազատիր , խալա , խալա ,  
Միքէ ես այսպէս միւս պիտ տանջւե՞մ ,  
Ա՛խ , այս տանջանքից ազատիր :

Խլ. — Խալան քեզ մատաղ լինի . ի՞նչ է պատահել ,  
որ այսպէս տխուր-տրտում երգում ես , լսողի սիրտը  
այրւումէ :

Ասկ. — Եթէ սիրտդ այրւումէ , նշանակումէ զու  
գթոտ սիրտ ունիս , ա՛յ խալա :

Խլ. — Ասածիցդ բան չհասկացայ , խալան քեզ  
մատաղ լինի . կրկնիր ասածդ որ հասկանամ :

Ասկ. — Մի այնպիսի բան չասացիր որ կրկնելու կարիք լինի։ Հիմա դուն ինձ լսիր, մի ինձ ասատեսնեմ, աշխարհո որ այսպէս գնա, որա վերջը ի՞նչ է լինելու։

Խլ. — Փառք Աստուծոյ, խալան քեզ մատաղ լինի, աշխարհին ի՞նչ է պատահել։

Ասկ. — Իմ ասելս այն է որ, այս բոլորը ի՞նչով է վերջանալու, օրինակի համար, ես այսպէս հասակ առաջանալու, Փառք Աստուծոյ ապրանք և կարուայ, մեծացայ։ Փառք Աստուծոյ ապրանք և կարութիւն կայ։ Բայց այս բոլորը մարդու կեանքի բաւարարութիւն չեն տալիս և դարձեալ մի բանի պակասութիւն է զգացւում, ճիշտ չէ ասածո, այ խալա։

Խլ. — Խալան քեզ մատաղ, ի հարկէ ճիշտ է, բայց ասածներիցդ մի որոշ բան չի հասկացայ։

Ասկ. — Պարզ է ասածո, այ խալա, ճշմարիտ խօսելով այս ու այն կողմ նայելով, տեսնում եմ որ մի բան ինձ պակասում է։

Խլ. — Խալան քեզ մատաղ որդի՛ ի՞նչդ է պակաս, և եթէ պակաս բան կայ, ասա Վէլիին, թող գնա բազարից բերէ։ Ուտելիքդ, խմելիքդ Փառք Աստուծոյ շատ առատ է։

Ասկ. — Դու իմ ասածո չես հասկանում, ես քեզ մի լուրջ բանի մասին եմ խօսում, իսկ դու բազարից ես խօսում։ Իմ ասածո այն է, որ միօրինակ կեանքը ո՞ւր է հասնելու, փող, ապրանք ունեմ, բայց փողատէրը մի ուրիշ բան էլ պէտք է ունենայ, մի այնպիսի բան որից շատ մարդիկ մի հօտ ունեն։

Խլ. — Խալան քեզ մատաղ, դու վաճառական մարդ ես, ոչխարի հօտն ի՞նչիդ է պէտք։

Ասկ. — Օ՛ֆ, խալա, էլի չի հասկցար՝ թէ ի՞նչ է իմ ուզածը։

Վէլի. — Հէտ, ես գիտեմ թէ ի՞նչ է ուզում իմ աղէն։

Ասկ. — Այ տղայ, դու էլ ես այս տեղ, ասա տես-  
նեմ ի՞նչ է իմ ուզածը:

Վելի. — Հլա, ես գիտեմ թէ ի՞նչ ես ուզում:

Ասկ. — Թէ ու գիտես, ասա էմի, ի՞նչ ես սպասում:

Վել. — Իմ աղէն, ասել չեմ կարող: (Փախչում է  
ծիծառելով):

Խլ. — Կարծես ծառան գժուել է: Խալան քեզ մա-  
տաղ, ինձ լաւ մի հասկցրու թէ ի՞նչ է ուզածդ:

Ասկ. — Այ խալա, ինձ լսիր, քու կարծիքով ես  
քանի՞ տարեկան կը լինեմ:

Խլ. — Այս տարի չէ, եկող տարի գալուց եւ անց-  
նելուց յետոյ 28 տարիդ կը լրացնես, բայց ինչի՞ և  
դարդ անում, դու դեռ երախայ ես:

Ասկ. — Տարօրինակ բան, բայց որքան էլ որ երա-  
խայ լինեմ, այնուամենայնիւ ոտքի վրայ կարող եմ  
կանգնել: (Ներսէս մտնում է Վելիին):

Խլ. — Ի հարկէ որ կարող ես, երիտասարդ ես:

Ասկ. — Լաւ ուրեմն, այդ քաջառողջ երիտասար-  
դը ուտէ խմէ, քնէ և ուրիշ ոչի՞նչ... ես գիտեմ, այ-  
խալա, որ ամէն բան առատ է, բայց միթէ մենք աշ-  
խարհ ենք գալիս ուտելու, խմելու և հագուելո՞ւ հա-  
մար: (Մեկուսի) է՞հ էլ ամաչելու տեղը չէ: (Խալային)  
Գիտե՞ս ինչ, խալա, ես կամենում եմ ամուսնանալ,  
կին առնել, կին, Դէ հիմա հասկացա՞ր թէ ի՞նչ է  
ուզածս:

Վել. — Ախր ես գիտէի թէ իմ աղէն ինչ էր  
ուզում, այ աղա, հոգուդ մատաղ ի՞նչ լաւ բան ասա-  
ցիր:

Խլ. — Խալան քո ցաւը տահէ, էլ ուր ես չուռ ու  
մուռ տալիս, այդպէս ասա, որ ես էլ բան հասկնամ:  
Շատ լաւ ես անում, խալան քեզ մատաղ լինի: Աստ-  
ուած քեզ արժանացնէ այն օրուան որ ես արժանա-  
նամ քո հարսնիքին և մի լաւ պարեմ:

Ասկ. — Բայց ի՞նչպէս ամուսնանամ, ամուսնութիւնը էլիւնը էլի հեշտ բան չէ:

Խլ. — Խալան քեզ մատաղ, ամուսնութիւնը ջուր խմելու պէս մի բանչէ: Ի՞նչ դժուարութիւն կայ այդ տեղ: Փառք Աստուծոյ, երիտասարդ ես, փող ունես, Աստուած վկայ, թագաւորի աղջիկն ալ ուզենաս, քեզ կտան: Այստեղ երկար մտածելու բան չկայ: Թող հէնց այսօր, շարբըս գլխիս գցեմ, գնամ քեզ համար աղջոկ ընտրեմ, և եթէ կամենում ես, ինքո ինձ ասա, թէ ո՞ր բէկի վաճառականի աղջիկը ուզեմ քեզ համար:

Ասկ. — Բայց ես ի՞նչ գիտենամ, թէ որ բէկի կամ վաճառականի աղջիկն է լաւը, քանի որ ես ինքս չեմ տեսել նրանց:

Խլ. — Վայ: Խալան քեզ մատաղ լինը, միթէ իմ աչքերս կո՞յլ են, Աստուած վկայ կ'երթամ ման կը գամ կը փնտոեմ, կը նայիմ, կը ջոկեմ և մի այնպիսի աղջիկ կ'առնեմ, այնպիսի աղջիկ որ մարդ տեսնելիս խելքը գնայ:

Ասկ. — Ոչ խալա, ես դրան համաձայն չեմ: Պէտք է որ աղջիկը ես ինքս տեսնեմ ու հաւանեմ:

Խլ. — Հապա դու տղամարդ տեղովդ աղջկան ինչ պէ՞ս ես տեսնելու: Միթէ քեզ աղջիկ ցոյց կը տա՞ն:

Ասկ. — Բանը հէնց դրանումն է, որ մինչեւ հիմա առաւտուանից քեզ հարցնում եմ՝ թէ սրա վերջը ի՞նչ է լինելու. ամուսնանալ եմ ուզում, բայց չգիտեմ՝ որին առնե՞մ, որովհետեւ ոչ ոքին չեմ տեսել և տեսնելու էլ հնար չկայ:

Խլ. — Խալան քեզ մատաղ լինի, արի դու պապենական ճանապարհով ամուսնացիր, քո ի՞նչ դործն է, գնամ քեզ համար մի աղջիկ ճարեմ:

Ասկ. — Այ խալա, ի՞նչ ես կարծում, ես արշինը 8 կոպեկանոց չիթը առանց տեսնելու չեմ առնում, ուր մնաց աղջիկը: Ոչ ես այդ ձեւով չեմ կամենում

ամուսնանալ, եթէ կարող ես մի միջոց ցոյց տուր, որ  
կարողանամ նախ աղջիկը տեսնել և յետոյ ամուսնանալ:

Խլ. — Խալան քեզ մատաղ լինի, ես ի՞նչ միջոց  
կարող եմ ցոյց տալ. եթէ կին լինէիր, քեզ տունէ տուն  
ման կ'ածէի:

Ասկ. — (Ժպտելով) եթէ կին լինէի, ես կին չէի  
ուզի:

Վելի. — Ա՛խ . . .

Խլ. — Զերբրս զլիսիս ծածկեմ  
Խալան քեզ մատաղ Ասկեար  
Քեզ գնամ աղջիկ գտնեմ  
Խալան քեզ մատաղ Ասկեար.

Ասկ. — Քոյ գտածդ ինչ անեմ  
Այդ լաւ չի լինի, խալա  
Աղջիկը ես պիտի առնեմ  
Արդեօֆ սրտիս դիւր կուգայ:

Խլ. — Մեր օրնեկում այդ չկայ  
Որ աղջկան տեսցնեն  
Եկ իմ խորհրդով գնայ  
Եւ այսպէսով գործ արա:

Ասկ. — Քեզ լաւ յայտնի է, խալա  
Որ չտեսած, չեմ առնի  
Թէ ոչ, չեմ ամուսնանայ  
Ինչ ուզում ես, ինձ ասա:

Վել. — Դու իմ սրտից, սրտից խօսեցիր  
Շատ լաւ ասացիր աղա,  
Դու տեղդ ծանր նսիր  
Չուր մի շարշարուիր, խալա:

Ասկ. — Է՞ս, էլի դու քոնն ես ասում, այ խալա,  
ես չեմ ուզում: (Նսում է սեղանի վրայ մռայլ, խա-  
լան մի սիկար է վառում, Վելին տիսուր է: Սիւլէյման  
ներս է մտնում):

Սիւլ. — Այդ ի՞նչ է քո դարդը  
Այդ ի՞նչ Տիրութիւն է սա  
ի՞նչ է քո Տանջանքը  
Սաս Տեսնեմ ինձ ասա:

Մի ամաչիր պատմիր,  
Ասկեար, քո դարդը ինձի  
Ի՞նչ ես դու մտածում  
Նման այդպիսի գերիի:

Այս աշխարհում միքէ  
Քո դարդերին նար չկայ  
Վերջ Տուր մտածմունքիդ  
Պատմիր Տեսնեմ քէ ի՞նչ կայ:

Միքէ դու չե՞ս լսել  
Որ այսպիսի առած կայ,  
«Աշխարհիս Երեսին  
Անկարելի բան չկայ»:

Սլ. — (Ասկեարին) Այ մարդ, քեզ ի՞նչ է պատահել  
որ սպաւորի նման այդ պէս նստել ես, կարծես աշ-  
խարհի դարդը քեզ են տուել:

Ասկ. — Սիւլէյման, շատ լաւ արացիր որ եկար:  
Ասում են որ դու մի շատ խելօք մարդ ես, տես-

նենք դու ի՞նչ խորհուրդ ես տալիս:

Սլ. — Ռւրեմի ինքու հաւատացած չե՞ս որ ես  
խելօք եմ:

Ասկ. — Հաւատում եմ, եթէ դու խորհուրդը տաս,  
այն ժամանակ աւելի եւս կը համոզուիմ:

Սլ. — Դէս, պատմիր, տեսնեմ ի՞նչ է պատահել:

Ասկ. — Ի՞նչ պէտք է պատահի բարեկամ, ես այն  
եմ ասում որ եթէ աշխարհը այսպէս էլ գնայ, որա  
վերջը ի՞նչ է լինելու:

Սլ. — (Ընդհատելով) կանգ առ, ուզածդ իմացայ:

Ասկ. — Ի՞նչ է ուզածում...

Սլ. — Ի հարկէ ուզում ես կին առնել:

Ասկ. — (Զարմանալով) Բա՛հ, ինչի՞ց իմացար:

Սլ. — Այդ հասկնալը մի այնպիսի դժուար բան  
չէ... երիսիցդ իմացայ. Հը խալա, այդպէ՞ս է թէ ոչ:

Խալ. — Ճաւդ տանեմ, ի հարկէ այդպէս է:

Սլ. — (Վելիիին) Այդպէ՞ս է, թէ ոչ Վէլի:

Ասկ. — Կէսով չափ համոզուեցի. բայց բարեկամ,  
հիմի մի խնդիր էլ կայ, եթէ դու կարողացար այդ էլ  
լուծել, այն ժամանակ կը համոզւիմ որ գլխիցդ մինչեւ  
ոտքերդ խելք ես:

Սլ. — Դէ՛ ասա տեսնեմ:

Ասկ. — Տես Սիւլէյման, ես այն համոզմունքին  
եմ, որ աղջիկ առնելը ապրանք առնելու պէս մի բան  
է, ինչպէս որ ապրանքը յաւը ու վատը ունի...

Սլ. — (Ընդհատելով) Կաց, իմացայ ուզածդ:

Ասկ. — Իմացա՞ր:

Սլ. — Ուզում ես որ նախ աղջկան տեսնես և յետոյ  
առնես:

Ասկ. — Բայց դու ինչպէ՞ս հասկացար:

Սլ. — Հենց որ բերանդ բաց արիր, հասկացայ,  
այդտեղ չի հասկնալու ի՞նչ կայ, այնպէս չէ՞ խալա:

Խլ. — Ճաւդ տանեմ, ի հարկէ այդպէս է:

Սլ. — Այդպէ՞ս է թէ ոչ Վէլի:

Վել. — Ճիշտ ես ասում, Աիւլէյման աղա,

Սլ. — Հիմա հասկացա՞ր որ գլխէս մինչեւ ոտքե-  
րս խելք եմ:

Ասկ. — Քիչ է մնացել, մի բան էլ կայ, եթէ ան  
էլ իմանաս, այն ժամանակ խկապէս կը հաւատամ որ  
դու շատ խելացի ես:

Սլ. — Հապա պատմիր, լսենք:

Ասկ. — Շատ լաւ, այ խելօք տղայ, հիմա ես ի՞նչ-  
պէս անեմ որ աղջկան տեսնեմ ու հաւանեմ:

Սլ. — Դրանից հեշտ ի՞նչ կայ:

Ասկ. — Դէ ասա, ասա, ի՞նչպէս...

ԱԼ. — Կը հանես այդ հագուստգ , կը հագնես հիներ ,  
կ'առնես մի քանի կտոր լաթեր , կտաւ , քիշմիր ,  
թափթա , բասմա և մի արշին էլ ձեռքդ կ'առնես և  
կը դառնաս արշին մալչի , ու փողոցէ փոլոց , դոնէ  
դուռ ման կը գաս և հէնց որ տեսան ուզած աղջիկդ ,  
կը գաս ինձ կ'ասես և ես կը գնամ և քեզ համար  
կ'ուզեմ :

ԱՆԿ. — Զարմանալի՛ միտք է , Աստուած վկայ :

ԱԼ. — Այնպէս չէ՞ , խալա :

ԽԱԼ. — Խալան քո ցաւը տանէ , այդպէս է :

ԱԼ. — Այնպէս չէ՞ , այ Վէլի , ի՞նչ կ'ասես :

ՎԵԼ. — Ես իմ Աստուածը , Սիւլէյման աղա , հաւ-

նեցայ . . .

ԱՆԿ. — Խելացի ես եղբայր խելացի ես , Աստուած

վկայ , այդպէս էլ պիտի անեմ :

ԽԱԼ. — Այ Սիւլէյման , բայց դու ի՞նչո՞ւ չես  
ամուսնանում :

ԱԼ. — Այո՛ , ես էլ եմ մտածում , ես էլ կ'ամուսնա-  
նամ խալա , նախ մեր Ասկեարին ամուսնացնենք :  
Երեւի շատ է շտապում , յետոյ ես էլ կ'ամուսնամ :  
Է խալաճա՞ն , հապա դու ի՞նչո՞ւ չես ամուսնանում :

ԽԱԼ. — Վոյ . . . քոռահամ ես , ի՞նչ , իմ ամուս-  
նանալու ժամանակն է :

ԱԼ. — Ո՛չ խալա , բաւական է որքան դու էլ այրի  
մնացիր , արի քեզ լաւ մի մտարդու տանք , որ մեր  
կեանքը օրհնող լինի , ա՛լ ժամանակդ է , այնպէս է  
թէ ոչ , Վէլի այ տղայ , դու էլ պատրաստուիր : Հա' . . .  
Ասկեար , ի՞նչ մտածմունքի մէջ ընկար :

ԱՆԿ. — Աստուած վկայ , հէնց վաղուանից ես  
պէտք է մալչի դառնամ :

ԱԼ. — Եւ շատ էլ լաւ կ'անես : Իսկ այժմ ժողով-  
ւեցէք շուրջո և լսեցէք : (Երգում է) :

Սլ. — Հաւատացիր ինձ ասկեար զան  
Անկեղծ եմ ես քեզ բարեկամ.  
Խորհուրդներիս դու հետեւիր  
Եւ քեզ համար աղջիկ գտիր :

Ասկ. — Արշին մալչի ես կը լինեմ  
Եւ իմ աշխով աղջիկ կ'ընտեմ,  
Իսկ քո խորհուրդներիդ համար  
Մի լաւ նուեր քեզ կ'ընծայեմ:

Սլ. — Դու Տեսար որ ես խելօֆ եմ  
Եւ ինս էլ շատ ազնիւ եմ  
Խոստացած ընծադ որ առնես  
Գործերիդ էլ միջնորդ կ'լինեմ:  
(Վէլին ախ է քաշում)

Սլ. — Վելի դու ի՞նչ ես մտածում  
Եւ ինչո՞ւ ես այդպէս տանչում  
Քեզ էլ մի աղջիկ կը գտնենք  
Ինչո՞ւ ես այդպէս «ախ» բառում.

Վել. — Ախ աղաջան, բարի եղեք  
Եւ ասածներդ կատարեք  
Գիշեր ցորեկ ես տանջում եմ  
Խեղճ Վելին եմ ինձ ազատեք,

Ասկ. — Աստուած վկայ հէնց վաղուանից ես ար-  
շին մալչի եմ դառնալու:

Սլ. — Եւ շատ լաւ կ'անես, Աստուած շուտով քեզ  
Նպատակիդ հասցնէ, մեզ էլ, այնպէս է թէ ոչ, այ խալա:

Խլ. — Ճաւդ տանեմ, ի հարկէ որ այդպէս է:

Սլ. — Այնպէս է թէ ոչ, այ Վելի:

Վել. — Այնպէս է աղաջան հոգուդ ղուրպան:

Սլ. — Ուրեմն այժմ այսպէս եղաւ, եկէք ինձ մօտ:

Սլ. — Աստուած օգնական լինի

Սլ. — Իմ սիրելի ընկեր Ասկեար  
Փեզի լաւ խորհուրդ տուի  
Իմ սիրելի ընկեր Ասկեար

Մի լաւ հարսանիքդ անենի  
իմ սիրելի ընկեր Ասկեար  
Ուրախ ուրախ ժեֆ անենի  
իմ սիրելի ընկեր Ասկեար :

Վել. — Ես սիրեմ իմ Ասուածը  
Ես ժեզ մատաղ աղա Ասկեար  
Եւ, իմ աղեն դրուս է ասում  
Ես ժեզ մատաղ աղա Ասկեար  
Դէ շուտ արա ամուսնացիր  
Ես ժեզ մատաղ աղա Ասկեար  
Իմ հանապարհն էլ բացուի  
Ես ժեզ մատաղ աղա Ասկեար :

Ասկ. — Հենց վաղուանից ես անպայման  
Արտին - մալչի եմ դառնալու  
Ու դոնէ դուռ եմ ընկնելու  
Ինձ համար աղջիկ ճարելու :

Ամէնքը՝ բացի Ասկեարէն. —

Ամենից լաւը նա է  
Որ դու մեզի լսես Ասկեար  
Եւ այդ հագուստդ փոխես  
Արտին - մալչի դառնաս Ասկեար  
Փողոցները ման գալով  
Չիրեր վաճառելով Ասկեար  
Քեզ համար մի լաւ գեղեցիկ  
Հարուս աղջիկ՝ զտիր Ասկեար :

(Պար )

Վարագոյր

Բ: ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Տեսարանը ներկայացնում է Սուլթան բէկի տան  
առաջի պարտէզը, և Գիւլզօհրան, Ասեան, Թէսին  
նստած, կարում են :

Գիւլ. — Ախ եարաք վերջ կը լինի  
Մեր այս ցաւ ու հոգսերին  
Ասուած դու խղճայ մեզի  
Եւ վերջ տուր մեր վիշտերին:

Ինչու համար պէսք է մենք  
Խաւարում այսպէս տանջուինք  
Ախ Ասուած դու խղճայ մեզ  
Եւ վերջ տուր մեր վիշտերին:

Աս. — Ախ Դիւլզօհրա, դու երգում ես, ես միշտ  
տխուր եմ,

Գիւլ. — Երեւի իմ երգը քեզ դիւր չի գալիս:

Աս. — Ոչ, ընդհակառակը ինձ շատ է դիւր գալիս  
այդ պատճառով էլ ես տխրութեան և մտածմունքի  
մէջ եմ ընկնում:

Գիւլ. — Է՞հ, ասա, մեր ամբողջ կեանքը տխրու-  
թիւն է ու մտածմունք:

Աս. — Այո՛, Աստուած վկայ. Ճշմարիտ ես ասում:

Թէլ. — Այ խանումներ. ի՞նչ կայ որ ախ ու վախ,  
էք քաշում, եթէ Աստուած կամենայ, Սուլթան բէկը  
այսօր էգուց ձեզ կ'ամուսնացնէ, կը գնաք տուն ու  
տեղի և զաւակների տէր կը դառնաք և վիշտերից  
կ'ազատուէք:

Գիւլ. — Այ թէլլի, այնպէս ինչպէս մեզ են ամուս-  
նացնում՝ բոլորովին չամուսնանալը աւելի լաւ է:

Թէլ. — Ինչո՞ւ, այ խանում, ինչո՞ւ ես այդպէս  
խօսում:

Գիւլ. — Աստուած վկայ դրուստ եմ ասում, ես  
երբեք չեմ կամենում այդ ձեւով ամուսնանալ, չես  
կարող իմանալ թէ քեզ ո՞ւմն են տալիս, ո՞վ է լինե-  
լու ամուսինդ, երիտասարդ է, ծե՞ր է ճաղա՞տ է,  
կա՞ղ է:

Աս. — Ուրեմն Գիւլզօհրա, մարդու չգնալով և  
մնալով թթու պիտի դառնաս:

Թէլ. — Աստուած մի արասցէ :

Գիւլ. — Միթէ ես ասում եմ որ տանն այնքան մնանք մինչեւ որ պառաւե՞նք . իմ ասածս այն է , որ մարդս մի առաջուց տեսնալու է թէ ում հետ է ամուսնանում : Նայէ , տեսնէ կերպարանքը , հաւանի և առնի :

Աս. — (Ծիծաղելով) Այնպէս բան առաջիր որ եփած հաւի ծիծաղն էլ կը գայ : Դու այս չորս պատի մէջ ումը կտրող ես տեսնել , որ գեռ միեւնոյն ժամանակ ուզում ես նայել , հաւանիլ :

Գիւլ. — Եթէ այդպէս է , ուրեմն աւելի լաւ է տան նստել քան ամուսնանալ :

Աս. — Ո՞չ , ո՞չ , դու չես ուզում , մի՛ ամուսնանար . իսկ ես կ'ամուսնանամ :

Թէլ. — Թող մի աղաս ուզենայ ձեզ ամուսնացնել , այն ժամանակ ես վազելով կը գնամ ձեր նշանածներին կը տեսնեմ , տուն ու տեղին կը նայեմ . յետոյ գալով կը բոլորը կը պատմեմ : (Գիւլզօհրա եւ Ասեա ծիծաղում են :

Գիւլ. — Լաւ , թէլի , նշանակում է , որ եթէ մեր փեսացուին դու տեսնես էլ , մեզ տեսնելու հարկ չկա՞յ :

Թէլ. — Ոչ երբեք , ես առանց տեսնելու և հաւանելու երբեք չեմ ամուսնանար : Իսկ դուք ինչպէս որ գիտէք :

Թէլ. — Աստուած վկայ խանում , առանց տեսնելու ամուսնանալը աւելի լաւ է . քան տեսնելով ամուսնանում ես , նանալը , որովհետեւ երբ չի տեսնելով ամուսնանում ես , սիրտդ դիրտում է որ ժամ առաջ տեսնես : Քեզ փառուի կը զուգեն , կը հագցնեն , ֆայէտօն կը նստեցնեն ու ուռա , ուռա տակլով կը տանեն տուն ու վարագոյրի ետեւ կը նստեցնեն և դու անհամբեր կը սպասես անոր գալուն և սիրտդ դիկ-դակ դիկ-դակ այնպէս է զար-

նում։ Մէկ էլ յանկարծ դուռը բացւում է և երիտասարդ փեսացուն մտնում է։

(Այս միջոցին դուռը բացւում է եւ Սուլթան բէկը երեւում է, աղջիկները իսկոյն լում են եւ իրենց գործերով զբաղւում)։ Աստուած մի արասցէ որ այսպիսի փեսացու լինի։

### Նոյնի եւ Սուլթան Բէկ

Ս. Բէկ. — Աղջի Թէլի, հազար անգամ ասել եմ քեզ որ պառկելու ժամանակ վրաս լաւ ծածկես, հիմի բաց եմ պառկելու մէջքս մրսել է։ Է՞հ եթէ հանգուցեալ Սօնաս կենդանի լինէր, այս բան չէր լինի։ Է՞հ մենակութիւնը լաւ բան չէ։

Գիւլ. — Հայրիկ, մենք չգիտէինք, եթէ մեզ ասէիք, մենք կը ծածկէինք։

Ս. Բէկ. — Լա՛ւ, չասացի, է՞հ արդէն անցաւ (կոսրատուելով), ոէ վեր կացէք, գնացէք տունը կարգի բերէք, ես էլ բազար գնամ, տեսնեմ ի՞նչ կայ, (Աղջիկները ներս են մտնում)։ Զի լինում, մինակ ապրելը ինձ բոլորովին ձեռք չի տալիս, տեսնում եմ որ հինգ տարի է, ինչ որ օր օրի վրայ յետ յետ եմ գնում։ Անցեալ օրը բժիշկ Միրզա Հիւսէինին ասում եմ, ախր այ բժիշկ, այստեղս ցաւում է, իսկ այստեղս երբեմն ծակում է։ Ասում է, կին առ, կը լաւանաս։ Ուր էր։ Եթէ լինէր այդպիսի կին, կ'առնէի, բայց ո՞ւր է, ո՞ւր է։ Ի հարկէ ինձ աղջիկ չեն տար, որովհետեւ տարիքս շատ է։ Իսկ փողս քիչ, և յետոյ հարսանիք սարքի, քէֆ արա, ո՞չ, դա ինձ ձեռընտու չէ, իմս պէտք է լինի առողջ և հաստ (Զեռքովը փորը ուռեցնում է)։ Ըհը, որ երեք մանէթ փողով, մի մոլլա և մի գլուխ շաքարով գործս վերջանայ, այն ժամանակ գիշերներն էլ մէջքս չի ցաւի... Է՞հ պազար գնամ տեսնեմ ի՞նչ կայ, ի՞նչ չկայ (Գնում)։

Ասկ. — (Բեմի ետեւից) Արշին մալ ալան, արշին  
մալ ալան, թափթայ, քիշմիր, բասմայ հէյ: (Մտնում է  
թեւի տակ մի քանի կտոր լար եւ ձեռին արտին) Ահա  
ամբողջերեք օրէ, որ գոնէ դուռ շրջում եմ, բայց փըն-  
տուածո չեմ գտնում: Այսօր էլ անցաւ, տեսնենք ի՞նչ  
կը լինի: Ո՞վ բախտ, գոնէ ինձ նայիր . . . Արշին մալ  
ալան, արշին մալ ալան, արշին մալ ալան, թափթայ,  
քիշմիր, բասմայ հէյ . . .

Ա. Թ. — Մալ ալան մալ ալան եկ այսեղ (կրկ.):  
Գիւլ. — Արշին մալ, արշին մալչի եկ այսեղ:  
Ասկ. — (Մօտենալով) Կարծես աղջիկների հանքն  
եմ ընկել, երեքը միասին դուրս եկան, տեսնենք, ի՞նչ-  
պէս բաներ են: (նրանց) Ասացէք աեսնամ, գեղեցիկ  
իսանումներ, ի՞նչ էք կամենում, չիթ բասմայ, թափ-  
թայ, ամէն բան ունեմ:

Ա. Թ. Գ. — Արտին մալչի ցոյց տուր:

Ասկ. — Այս բոպեիս, խանումներ:

Ա. Թ. Գ. — Բողչադ բաց, մեկմեկ ցոյց տուր:

Ասկ. — Ցոյց տամ, ցոյց տամ խանումներ:

Ա. Թ. Գ. — Ցոյց տուր, ցոյց տուր ինչ որ կայ:

Ասկ. — Թաֆքայ, ֆիւմիր եւ բասմայ:

Ա. Թ. Գ. — Մեզ համար տեսնենք ի՞նչ կայ:

Ասկ. — Ինչ որ ցանկաք, խանումներ:

Ա. Թ. Գ. — Ի՞նչ գեղեցիկ կտոր

Ծաղիկն ալ յարմար

Նորահարսի համար

Լաւն է լաւն է:

Այս երանի, ո՞վ հարսանեաց ուր կարէ

Այս երանի, ո՞վ սիրած եարին տեսնէ:

Ա. Թ. Գ. — Արշին ի՞նչ կ'արժէ այս գեղեցիկ կտո-

րին:

Ասկ. — Զեզ համար միայն տասներկու կոպէկ

Ա. Թ. Գ. — Օ՛, ի՞նչո՞ւ այդպէս թանկ է, թանկ է

այսպիսի կտորը միշտ ութ արժէ:

Ասկ. — Ոչի՞նչ խանումներ ձեզ ութով կը հաշւեմ :

Աս. — Աղախնու համար տասն արշին կտրէ :

Գիւլ. — Ա՛յս ո՞րքան սիրոն աչքեր ունի նա :

Ա. Թ. Գ. — Ախ երանի որ հարսանեաց ուր կարի

Ախ երանի որ սիրած եարին տեսնի:

(Կրկ.)

Ասկ. — Որքան լաւն է այս անպիտանը :

Ա. Թ. Գ. — Ա՛յս երանի որ հարսանեաց ուր կարի

Ա՛յս երանի ով իսրած եարին տեսնի:

(Կրկ.)

Ասկ. — Չափեմ, չափեմ, (չափելով) մէկ, երկու,

կարծեմ փնտուծո գտել եմ... երեք, չորս, Աստուած

վկայ շատ սիրուն աղջիկ է ... հինգ, վեց, եօթը ...

կարծես իմ բախտը այս պէտք է լինի ... ութը, ինը...

երեւի ինչպէս երեսն է այնպէս էլ սիրալ պէտք

է որ գեղեցիկ լինի. տասը, տասնըմէկ, տասներկո ...

Գիւլ. — Տասը արշին բաւական է.

Ասկ. — Ա՛յս, մոռացայ, այստեղ տասը արշին է  
(տալիս է աղախնուն) քսանից էլ աւելի է, բայց ինչ  
արած :

Աս. — Մեզ համար ոչինչ չունե՞ս :

Ասկ. — Խանում ձեզ համար էլ ունեմ, բայց տանն  
եմ մոռացել, միւս անգամ կը բերեմ, (Գիւլզօհրա փող  
է տալիս) : Զեռքիդ պարաքեաթն էլ ինձ բաւական է :

Գիւլ. — Ինչի՞ց իմացար որ իմ ձեռքը պարաքեա-  
թով է :

Ասկ. — Այնպէս սիրտս վկայում է, (Մեկուսի)

Աստուած վկայ հէնց որ ուզածո է : Խանումներ, ասա-  
ցէք ինդրեմ, Սուլթան բէկի տունը ա՞յս է :

Ամենք. — Այո՛, այս է :

Ասկ. — Աստուած հաստատ պահէ : Հապա Սուլ-  
թան բէկի աղջիկը ո՞րն է :

Աս. — Ահա, այս է :

Ասկ. — Աստուած կեանք տայ : (Մեկուսի) Բայց  
ի՞նչ գեղեցիկ աղջիկ է :  
Աս. — Գիւլզօհրա, դէ տուն գնանք, թէ չէ հօր-  
կը պարկանայ : (Գնում են):  
Կղբայրո կը գայ և կը բարկանայ :

Ասկ. — իշանում ողջ լինա-  
գիւլ. — Դու էլ ողջ լինես :

Ասկ. — Կարծեմ գտայ ես իմ եարք,  
և առ ու առ ականութեան ու հայր

իմ դարդերիս դեղի ու ամր.  
Այսուած դուն օգնական եղիր,

Միայն այս է ինձ յարմարը:

թագնուեմ տասնամ իմ, որքան գեղեցիկ էր  
Գիւլզօհրա):  
Գիւլ. — Ա՞չ Աստուած իմ, որքան գեղեցիկ էր  
այս երիտասարդը: Ճիշտ էին տառմ, որ արշին մալչին  
շատ գեղեցիկ է: Աստուած վկայ, եթէ հայրս համա-  
շատ գեղեցիկ է: Աստուած վկայ, եթէ լուս էլ իինի ես  
ձայնուի, ես նրա հայտ կ'ամուսնանամ, ինչքան էլ լինի ես  
նրա երեսը տեսած եմ. գիտեմ որ կաղ չէ, ճաղատ  
չէ, ծեր չէ, գեմքն էլ հաւանեցի, եթէ լուս հագցնես մի  
թէկի տղի պէս կը գեղեցկանայ նա, ինձ ասաց թէ  
ձեռքդ պարաքեաթով է, և նա ինձ ինչպէս էր նա-  
յում, Ալս, ինչեր եմ խօսում, գուցէ նա կին և երա-  
յում, Ալս, ինչեր եմ խօսում:

Արքունիք (Երեւանի թիւն՝ խանում): Ասկ. — Առաջին անգայ:

Գիւլ. — (Ցնցուելով) Ահ, ինչպէս զարսացայ՝  
Գիւլ. — (Ցնցուելով) Ահ, ինչնում, այդ ես եմ . . .

Կազմ. — Մի վախճակ խանում.  
Ասկ. — Մի վախճակ եմ մոռացել:

Գիւլ. — Եթէ մոռացել էք այստեղ կը լինի:

Ասկ. — Վնաս չունի, տանը ուրիշ արշին էլ ունեմ... խանում երանի Սուլթան բէկը քեզ նման տասներկու աղջիկ ունենար:

Գիւլ. — Ինչո՞ւ:

Ասկ. — Ահաթէ ինչո՞ւ, մէկը բէկին կը տար, մէկը էյխին, մէկը մօլին, մէկը վաճառականին, վերջինշ մնացածն էլ ինձ կը տար,

Գիւլ. — Ինչո՞ւ չէ, շատ լաւ կը լինէր...

Ասկ. — Բայց ոչ, չի տար, ի հարկէ չի տար, նա բէկ, ես հաստրակ արշին մալչի:

Գիւլ. — Դու ի՞նչով ես պարապում:

Ասկ. — Ես հասարակ արշին մալչի եմ և փառք Աստուծոյ կարողանում եմ հաց ճարել ինձ և խալայիս համար:

Գիւլ. — Բայց միթէ դու ամուսնացած չե՞ս:

Ասկ. — Ախր ինչպէ՞ս ամուսնանամ, չտեսած սաղկան չեմ կարող առնել. իսկ իմ տեսածներից է այնպիսի մէկը եմ հաւանել, որ նրան ինձ չեն տայ:

Գիւլ. — Աղջիկը ինքը քեզի չի՞ ուզում:

Ասկ. — Չեմ կարծում որ ուզէ, որովհետեւ նա բէկի աղջիկ է:

Գիւլ. — Դու նոտիս աղջկան հարցրու՝ յետոյ այդպէս խօսիր, ի՞նչից դիտես որ չի ուզի:

Ասկ. — Սեւ սեւ աչեր գեղեցիկ,

ինձ մի աներ խելազար:

Տանջում եմ գիշեր ցորեկ

Քո սիրովդ անդադար:

Ի՞նչու համար մտածել,

Ի զուր տեղ դարդ բաւել:

Արի մենք ամուսնանանք

Եւ ինչո՞ւ այսպէս տանջուենք:

Գիւլ. — (Մեկուսի) Աստուծ վկայ, ինձ էլ նոյն

բանը պատահեց : (Նրան) Բայց հայրս ինձ քեզ չ'

տայ . . . Ասկ. — Գիտեմ որ չի տայ , դու ինքու էլ չես

կամենայ :

Գիւլ. — Ո՞րտեղից գիտես որ չեմ կամենայ :

Ասկ. — Դու ո՞վ . . . Ես ո՞վ . . .

Ասկ. — Սովորելով փորձւիցի

Ամենից ես ծաղրւեցի

Յաւ ու տանջանի շատ տարւալ :

Բայց վերջապէս քեզ գտայ

Այնապէս սիրեցի , սրտով սիրեցի

Որ չեմ կարող ասել քեզ

Եւ չեմ ապրի առանց քեզ ,

Արժին մալ ալան :

Գիւլ. — Ոչ ոքին չեի տեսնում

Դարդերս չեի պատմում

Ի՞նչ է սեր չգիտեի

Քեզ տեսնելով սիրեցի

Այնապէս սիրեցի , սրտով սիրեցի

Որ չեմ կարող ասել քեզ

Եւ չեմ ապրի առանց քեզ ,

Արժին մալ ալան :

Միասին . — Ախ մեր բախտը մեզօ գնեց

Ես ինձ թռւառ կարծեցի

Բայց ինձ կեանքը ողջունեց

Քեզ տեսնելով սիրեցի ,

Այնապէս սիրեցի , սրտով սիրեցի

Որ չեմ կարող ասել քեզ

Ես չեմ ապրի առանց քեզ ,

Արժին մալ ալան :

Ասկ. — Բայց չե որ իսպառում քեզ համար զոյդ չեմ :

Գիւլ. — Զգիտեմ , բայց ես քեզ սիրեցի :

Ասկ. — Խանում . . .

Գիւլ. — Ինձ խանում մի ասիր, իմ անունս  
Գիւլզօհրա է :

Ասկ. — Գիւլզօհրա, ուրեմն ի՞նչպէս անենք որ  
քեզ ինձ տայ:

Գիւլ. — Ինձ հօրիցս խնդրիր, տուեց լաւ, եթէ  
չտուեց այն ժամանակ իմ կամքովս քեզ հետ կ'ամուս-  
նանամ:

Ասկ. — Հիմա դուն տուն գնու, թէ, չէ մեզ միա-  
սէն կը տեսնի: Մնաս բարով:

Գիւլ. — Գնաս բարով:

Ասկ. — Տե՛ս, խօսքդ ես չառնես,

Գիւլ. — Ո՛չ, ես խօսքիս տէրն եմ:

Ասկ. — (Սենակ) Աղջիկը ինձ հաւանել է, բայց  
ափսոս որ չի գիտէ թէ ես մի հարուստ վաճառական  
եմ: Ինքս էլ գիտմամբ չի յայտնեցի, որպէսզի աղջկան  
փորձեմ, հիմա գնամ մի պատրուակով խալայիս էլ  
այստեղ ուզարկեմ, թող տեսնէ թէ ես ինչպէս աղջիկ  
եմ ընտրել: (Գնում է):

Գիւլ. — (Սենում է) Այս ի՞նչ արեցի, մի օտար  
տղի այնպիսի բաներ ասոցի, որ մի աղջկայ համար  
անվայել է . . . Զգիտեմ ո՞րտեղից եկաւ ինքը լաւ,  
խօսքերը քաղցր . . . Երբեք մտքիցս չի հեռանում:  
(Երգ)

Ո՞րտեղից պատահեց Ասուած իմ

Արտին մալ ալան  
Սիրս կրակով լցրեց իմ

Այրում եմ:

Ինքը լաւ, խօսքերը բաղցր

Արտին մալ ալան  
Սիրեցի ամենից բարձր

Տանջում եմ:

Ա. Թ. — (Միասին երգ)

ինչ վատ ես տրամադրուած,  
Գիւլզօհրա մեզ ասա,  
ի՞նչ պէս խելագարուած,  
Գիւլզօհրա մեզ ասա,  
Սիրտդ ինչ պէս է այրած:  
Գիւլզօհրա մեզ ասա  
Մեզ ասա Գիւլզօհրա:

Օրիորդին այդ չի սազի,  
Տիւրելն ու մտածել,  
Այդ ինչ է քեզ պատահել  
Գիւլզօհրա շուտ ասա,  
Մեզ ասա Գիւլզօհրա:

(Կամաց կամաց հեռանում են)

(Ներս են մտնում Ասկեար եւ խալա)

Ասկ. — Տես խալա . աղջիկը հէնց այս տանն է  
բնակւում, այս կտորը կը տանես և կ'ասես որ արշին  
մալչին ուղարկեց, եթէ ո՛վ լինելդ հարցնող լինի,  
կ'ասես արշին մալչու խալան եմ, հասկացա՞ր:

Խալ. — Հասկացայ, խալան քեզ մատաղ, դնում  
եմ: (Ներս մտնում է)

Ասկ. — Հետզհետէ աղջկան աւելի ու աւելի եմ  
սիրահարւում: Հէնց այսօր Սիւլէյմանին պէտք է տես-  
նեմ և ուղարկեմ որ դնոյ միջնորդութիւն անէ: Այս-  
պէս ուրեմն ուղածո դտայ: Այս տունը, այս բակը, այս  
պարտէզը բոլորը կարծես երեսիս ժպտում են: Այժմ  
այլեւս աւելորդ է այստեղ մնալը, տուն գնա խալայիս  
գալուն սպասեմ, տեսնեմ ի՞նչ լուր է բերելու: (Գնումէ)

Սլք. բէկ. — (Ներս է մտնում) Հէնց ամէնքն էլ  
իմ ասածն են կրկնում, թէ կին առ, կը լաւանաս:  
Հէնց ի՞նչպէս առնեմ: Ո՞րտեղից մի այդպիսի կին գըտ-  
նեմ: Արի, այ կին, եկ, եկ որտեղ ես: (Այս միջոցիս  
խալան է դուրս գալիս եւ ուզում է գնալ: Սուլքան  
բէկ չափազանց զարմացած մեկուսի) Այս ի՞նչ է, ար-  
բէկ չափազանց զարմացած մեկուսի) Այս ի՞նչ է, ար-  
բէկ աչքի՞ս է երեւում: Ոչ, սա կին է և ինքն էլ

նոր մեր տնից դուրս եկաւ։ Կարծես Աստուած իմ  
բաժինը ինձ հասցրեց։ (Նրա կողմը դառնալով) է՛յ,  
ո՞վ ես, ի՞նչ գործ ունես մեր տունը։

Խալ. — Արշին մալ էի բերել, աղջկ'անց ցոյց տա-  
լու համար։

Սլք. Բեկ. — (Մեկուսի) կին լինելը կին է, միայն  
վատ չէր լինի, եթէ երեսը կարողանայի տեսնել։  
(Նրան) Շատ լաւ, գուցէ դու տղամարդ ես չաղրայով  
փաթթուած։

Խալ. — Ինչե՞ր էքա սում, բէկ։

Սլք. Բեկ. — Եթէ այդպէս չէ, դէ՛ երեսդ բաց արա-  
տեսնեմ։

Խալ. — (Չաղրան վերցնելով) Հիմա հաւատացի՞ր  
որ կին եմ։

Սլք. Բեկ. — (Մեկուսի) Այո՛, կին է և ինքն էլ  
ընը, շատ լաւ տեսակից է։ (Նրան) Բայց դու ինձ ասա-  
տեսնեմ, թէ դուն ո՞վ ես և ո՞ւմ կինն ես։

Խալ. — Ես Բազաղ-Քարբալա Նասիրի կինն եմ,  
գուցէ կը ճանաչես։

Սլք. Բեկ. — Զէ, չեմ ճանաչում, ես բազաղ մա-  
ղազների հետ գործ չունեմ, լաւ, ուրեմն ամուսինդ  
բազազութիւն է անում, իսկ ինքդ էլ արշինով մալ  
ես ծախում։

Խալ. — Այո՛ մարդս բազաղ էր։

Սլք. Բեկ. — Է՛ր . . . իսկ հիմա՞ ինչ է անում։

Խալ. — Հիմա Աստուած գիտէի՞նչ է անում, հան-  
գուցեալը 12 տարի է որ մեռել է։

Սլք. Բեկ. — Մեռե՞լ է, այդ ի՞նչ լաւ բան է եղել,  
և դու էլ այրի ես մնացել։

Խալ. — Այո՛, այրի եմ։

Սլք. Բեկ. — Այդպէս ասա էլի։ Զէ՞ որ ես էլ այրի  
եմ։ Ուրեմն ասում ես 12 տարի է մարդդ մեռել է և  
դու այրի ես մնացել, լաւ հիմա ի՞նչպէս անենք։

Խալ. — Ի՞նչը ինչպէս անենք :

Սլբ. բեկ. — Ես այն եմ ասում, որ իմ կինս էլ հինգ տարի է որ վախճանուած է : (Մեկուսի) Լաւձեռքս է ընկել, պէտք չէ սրան բաց թողնել : (Խալան ուզում է գնալ) Մի կաց, է՛ ուր ես այդպէս շտապում :

Խալ. — Շտապում եմ, գործ ունեմ :

Սլբ. բեկ. — Արատից լաւ գործ ի՞նչ կը լինի : Եկ դարզերնիս իրարու պատմենք . . . Ուրեմն դու ասացիր որ այրի եմ :

Խալ. — Այո՛, ասացի որ ամուսինս 12 տարի է մեռել է :

Սլբ. բեկ. — Բանը նրանումն է որ ես ոլ եմ այրի :

Խալ. — Ի՞նչ արած, դա Աստուծոյ կամքն է, մենակ դու չես :

Սլբ. բեկ. — Այդ գիտեմ որ այդպէս է, բայց արի երկուքս էլ մի բան անենք :

Խալ. — Ի՞նչ բան :

Սլբ. բեկ. — Մի այնպիսի բան, որ ոչ դու այրի մնաս և ոչ էլ ես :

Խալ. — Այդ ի՞նչպէս անենք :

Սլբ. բեկ. — Էլ ի՞նչպէս պիտի լինի, մի մօլլա, մի գլուխ շաքար և երեք մանէթ փող, գործը կը վերջանայ :

Խալ. — Չեմ հասկանում թէ ի՞նչ ես ասում :

Սլբ. բեկ. — Չե՞ս հասկանում, աս ի՞նչ տիլիքիւմազ է եղել, բա, որ այդպէս է ինձ լոիր, այդ դիլիքիւմազ :

Սլբ. բեկ. — (Երգում է)

Մեկ ձի առայ աշխարհ ընկայ,

Մառալս դիլիքիլմազ:

Վերջը եկայ քեզի գտայ,

Մարալս դիլիքիլմազ.

Աօտեցիր խնդրեմ, աշերդ Տեսնեմ,

Եկ առնեմ դիլիքիլմազ:

(Կրկնել)

Տուն կը տինեմ քեզի համար,  
Եկ առնեմ դիլիբիլմազ,  
Մէջը զմրուխս, ոսկի մարմար,  
Մարալս դիլիբիլմազ  
Մօսեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ  
Եկ առնեմ դիլիբիլմազ  
(կրկնել)

Ես այրի, դու այրի, դու եկ,  
Ինձ արի դիլիբիլմազ,  
Ի՞նչ ասես դու ինձ յօժար ես,  
Մարալս դիլիբիլմազ,  
Մօսեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ  
Եկ առնեմ դիլիբիլմազ:  
(կրկնել)

(Պար)

Ասկ — (Ներս մտնում է պարի ժամանակ) Այս  
ի՞նչ զարմանալի բան է: (Առաջ գալով) Բէկ, ա՛ բէկ,  
սպասիր խօսքն ասեմ, այդ լաւ բան չես անում, որ  
ուրիշ կնոջ սիրահարական եեղեր ես երգում:

Սլբ. Բէկ. — Այ ասա, դու ո՞վ ես,  
Ասկ. — Ի՞նչպէս թէ ով եմ, չէ՞ որ սա իմ խալան է,  
Սլբ. Բէկ. — Խալա՞դ է, ըսել է արշին մալչին  
գո՞ւ ես:

Ասկ. — Այս', ես եմ,  
Սլբ. Բէկ. — Բայց գիտե՞ս, դու շատ անխիղճն ես  
եղել:

Ասկ — Ի՞նչո՞ւ բէկ, ի՞նչ է պատահել,  
Սլբ. Բէկ. — Ի՞նչ պիտի լինի, միթէ կարելի՞ է  
ասանկ խալային 12 տարի այրի պահել:

Ասկ. — Ի՞նչ արած բէկ, յարմար ամուսին չեմ  
գտնում:

Սլբ. Բէկ. Յարմար ամուսին, հա բա ես մարդ  
չեմ, խփի՛ր ափիս, ազգական լինենք:

Ասկ: — (ծիծաղելով) Դու հանաք ես անում բէկ:

Ոլք. բեկ. — Տօ, ի՞նչ հանաք անելու ժամանակ է, խփիր ափիս :

Ասկ. — Լաւ բէկ, գիցուք թէ ես քեզ խալայիս տուի : Իսկ դրանից ի՞նչ օգուտ :

Ալք. բեկ. — Խալային օգուտը այն կը լինի, որ ինձ պէս բէկին կին կը լինի, իմ օգուտս այն կը լինի, որ գիշերները քնելու ժամանակ մէջքս չի մսի, իսկ որ գիշերները օգուտը այն կը լինի, որ ինձ պէս բէկի հետ բարեքո օգուտը այն կը լինի, որ ինձ պէս բէկի հետ բարեկամ կը լինես : Սրանից աւել ի՞նչ ես ուզում :

Ասկ. — Միայն այդքան բէկ, ոչ ես համաձայն չեմ, արի գնանք խալա :

Ալք. բեկ. — Սպասիր, սպասիր այ մարդ, բա դու ի՞նչ էիր ուզում :

Ասկ. — Իմ ուզածը բէկ, արի երկու կողմից ազգական լինենք :

Ալք. բեկ. — Ի՞նչպէս թէ երկու կողմից :

Ասկ. — Ահա այսպէս, ես քեզ իմ խալայիս կը տամ, իսկ դու քո աղջիկը ինձ :

Ալք. բեկ. — (Բարկացած) Յիմարի տղայ, յիմար, էդ ի՞նչ ես գուրս տալիս յիմար - յիմար : Եւ, Սուլթան բէկս, աղջիս տամ մի հասարակ արշին մալչու : Գնա՛, կորիր այս տեղից դու էլ քու խալան էլ, յիմար գլուխ, քեզ այնպիսի ապտակ կը տամ, որ ատամներդ բերանդ կը թտփւեն :

Ասկ. — Արի գնանք խալա. (Գնալով մեկուսի) արշին մալչու չտուիր, վաճառական Ասկեարին կը տաս :

Ալք. բեկ. — Մէկ էս յիմարին մտիկ արէք, դեռ չի էլ ամաչում, իր այրի խալայի փոխարէն իմ օրիորդ աղջիկն է ուզում. կարծես իմ աղջիկը բազարիցն եմ գնել : Ո՛չ, ոչ, ես բախտ չունեմ : Կինը երկինքէն ընկնել : Ո՛չ, ոչ, ես բախտ չունեմ : Կինը երկինքէն ընկնել : Նման ձեռքս էր ընկել, բայց էղ, էղ, էղ դու կածի նման ձեռքս էր ընկել, բայց էղ, էղ, էղ դու անիծուած տղայ, մուրթատի տղայ, մուրթատը գործս փճացրեց : Գործը գլուխ բերելու համար մնացել էր երեք մանէթ փող, մի մոլլա և մի գլուխ շաքար, ա՛խ, ա՛խ :

ՍԼԲ: բեկ. — (Երգում է)

Արտին մալչի տունդ բանդրի,  
Հաս խալային ձեռքեն խլեց,  
Սուլթան բեկի խօսքը կոտրեց:  
Չորանաս, բոռանաս, արտին մալչի,

Այս արտին մալչի:  
Իմ հաս եարս ձեռքես զնաց  
Չոր զլուխս անտեր մնաց,  
Այս իմ մեջս մրսած մնաց,  
զլուխսդ կպչի:

(Պար)

(Վարագոյր)

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՆ,

(Տեսարանը ներկայացնում է Սուլթան բեկի տունը, հարուստ կահկարասիքով դասաւորուած մի սենեակ :

Գիւլ. — (Երգում է)

Սիրուն քոչնիկ քոիր զնա,  
Սիրած եարիս բարեւ արա:  
Ասա որ նա ժիուր նսած,  
Գիշեր ցորեկ արտասուալից  
Քեզ է սպասում:

Արտին մալչի ի՞նչ արեցիր  
Սրտումս խոր վերք քողիր  
Ախ սրտումս կրակ վառեցիր  
Հոգիս այրեցիր  
Սիրս վառեցիր  
Մենակ քողուցիր:

Աս. — (Ներս է մտնում) Ի՞նչ է պատահել քեզ  
Գիւլզօհրա, ի ոէր Աստուծոյ ասա, այս քանի օրէ ինձ  
շատ փոխուած ես երեւում:

Գիւլ. — Աստուած վկայ, ես ինքս էլ չգիտեմ,  
գուցէ հիւանդ եմ:

Աս. — Բայց չէ՞ որ մի տեղը պիտի ցաւի, փառք  
Աստուծոյ քո ամէն տեղդ աւ լաւ է:

Գիւլ. — Ի զուր ես հարցուփորձ անում, ի ոէր  
Աստուծոյ, հանգիստ թող ինձ:

Աս. — Ո՞չ Գիւլզօհրա, այս քանի օր է, որ Դու  
բոլորովին փոխուած ես, հիւանդ չես, ուրեմն այստեղ  
մի պատճառ կայ . . . Աղջի, գուցէ դու մէկի վրայ  
սիրահարուած ես:

Գիւլ. — Ո՞ւմ վրայ պէտք է սիրահարւեմ . . .

Աս. — Ո՞չ, ո՞չ, կարմրեցիր, անպատճառ մէկի  
վրայ սիրահարւել ես: (Մտածում է) Մեզ մօտ բացի  
արշին մալչուց ուրիշ ոչ ոքի չի եկել: Երեւի անցեալ  
օրուայ կեատայի վրայ սիրահարւել ես:

Գիւլ. — Ինչո՞ւ ես դու նրան կեատայ անւանում:

Աս. — Ի հարկէ կեատայ է, մի հասարակ արշին  
և վերջապէս քեզ ամօթ է Գիւլզօհրա, ինքդ բէկի  
աղջիկ և սիրահարւես մի արշին մալչու վրայ, Աստ-  
ուած վկայ, արեւի պէս էլ փայլի, չէի սիրի: Նա ո՞վ,  
ես ո՞վ:

Գիւլ. — Աստուած վկայ ինքս էլ չգիտեմ թէ ինձ  
ի՞նչ է պատահել: (Լալով երեսը ծածկում է):

Աս. — (Խրատելով) Դու հասած աղջիկ ես, այդ  
մտքերդ գլխիցդ հանիր: Աստուած մի արասցէ, եթէ  
հայրդ իմանայ կտոր կտոր կ'անէ քեզ:

Գիւլ. — Թող հայրս իմանայ, ինձ մի անզամից  
սպաննէ, որ հողիս ազատւէ:

Աս. — Յիմարսւթիւններ, յիմարսւթիւններ, վեր  
կուց, գնանք միւս սենեակը, տես քեզ ինչեր եմ ասե-  
լու, (Միասին գնում են):

Սլք. բէկ. — (Ներս է մտնում) Անզգամ արշի մալ-  
չի . . . խալան լաւ էր ձեռքսընկել, բայց չեղաւ:  
Հէնց ձիշտ ուզած կինս նա էր, տարիքով, այրի, որ  
մի հատ մոլլայով և մի գլուխ շաքարով ամէն բան կը

պրծնէր։ Բայց արի տես որ բախտ չունեմ. անզգամ  
լակոտը այրի խալայի փոխարէն իմ գեղեցիկ աղջիկս  
էր ուզում, կարծես աղջիկանիցս ձեռք եմ քաշել, որ  
բաղարի լակոտին տայի Ես մի այնպիսի բէկ եմ, որ  
բոլոր ծանօթներս անունս գիտեն և յանկարծ լակոտի  
մէկը ուզում է ինձ փեսայ դառնալ։ Բայց խալային  
կ'առնէի հա՛, և եթէմի նկատողութիւն անող լինէր,  
կ'ասէի մի խեղճ որբեւայրի կին էր, մեղքցայ առայ,  
մանաւանդ մատաղը իր ոտքով է եկել։ Սատանի ձու-  
տը գործը խանգարեց և չթողեց որ վերջացնէինք։  
Է՛ս . . . Գնամ քիչ մը հանգստանամ, մէջքիս ցաւը  
նորէն բռնեց։ (Մտնում է, դուրս են գալիս Թէլլի եւ  
Ասեա)

Թէլ. — Օ՛ֆ, աղաս էլի գնաց ձգւելու։ Էղ մարդը  
ուղղակի զահլէս տարել է։ Հիմի էլի պիտի կանչի,  
աղջի թէլլի, արի մէջքս տրորիր։

Սլր. բէկ. — (դրսից) Աղջի թէլլի, արի մէջքս  
տրորիր . . .

Թէլ. — Հը՝ չասացի, զահրումար, գալիս եմ, գա-  
լիս, (դուրս է գնում)։

Աս. — (Ներս է մտնում) Այսքան խրատեցի չեղաւ,  
երեւում է որ աղջիկը շատ է սիրում, այնպէս է  
լալիս՝ արցունքները կարկուտի նման է թափում, որ  
մարդու խղճալն է գալիս։ Զը գիտեմ ո՞րտեղից պատա-  
հեց այն արշին մալչին. լինէր բէկի տղայ կամ վաճա-  
ռական, այն տաեն ուրիշ բան։ (Մօսենալով պատու-  
հանին) Այդ մեր կողմը եկողը ո՞վ է, ա՛հ, ինչ գեղե-  
ցիկ երիտասարդ է։ Կարծես բէկի տղայ լինի, եթէ  
սիրահարւելու էլ լինի, գոնէ այսպիսին սիրէ, արդեօք  
մեղ մօտ է գալիս, այս՛, ուղղակի, մեղ մօտ է գալիս,  
թող գայ. չպիտի հեռանամ, եկաւ։ (Դուռը բաղիսւում  
է, Ասեան բաց է անում, Սիւլեյան մտնում է, Ասեան  
աշխատում է երեսը ծածկել)։

Ալ. — Սուլթան բէկը տո՞ւնն է :

Աս. — Այո՛, քիչ սպասեցէք այստեղ, իսկոյն գնամ  
կանչեմ : (Գնում է)

Ալ. — Բեկի աղջիկը երեւի սա եր  
Մեր Ասկեարը շատ է հաւան  
կացել, ձեզ եմ ասում  
Շատ է հաւան կացել:

Ով կ'իմանար որ Սուլթան բէկ  
Այսպէս նաշխուն աղջիկ ունեցել  
Ձեզ եմ ասում

Աղջիկ ունեցել:

Ափսոս, ա՛ ափսոս, ես չէի գիտել  
Որ այսպիսի գեղեցիկն է եղել:  
Ձեզ եմ ասում

Գեղեցիկն է եղել:

Իսկ ի՞նչ կը լինի փոխանակ Ասկեարի համար ու-  
զելու, հէնց ինձ համար ուզեմ . . . Բայց ոչ, ընկերոջ  
նկատմամբ մի այդպիսի վարմունք իմ կողմից, նա-  
մարտութիւն կը լինի : Ասկեարը ինձ այնքան վստա-  
հացել է, որ իբր պատգամաւոր այստեղ է զրկել, մի-  
եւսոյն ժամանակ ինքը աղջկան սիրահարուած է,  
նալլաթ շէյթանին, մարդ պէտք է որ բարեկամու-  
թեան մէջ շիտակ լինի . ոչինչ ես ինձի համար կը փըն-  
տում մի ուրիշը :

Սլք. բէկ — (Ներս է մտնում) Ա՛, Սիւլէյման, որ-  
տեղից որտեղ, իսէր լինի : Նստիր տեսնենք, ի՞նչ կայ,  
ինչ չկայ :

Ալ. — Խէր չեղած ի՞նչ պէտք է լինի, փառք Աս-  
տուծոյ ամէն բան կարգին է :

Սլք. բէկ. — Շատ գեղեցիկ, ասա տեսնենք ուրիշ  
ինչ կայ :

Ալ. — Գիտե՞ս ինչ կայ բէկ, այս աշխարհի դոր-  
ծերը այնպէս են դասաւորուած, որ մարդս միշտ մար-

Դու կարիք է զգում։ Տեսնում ես և յետոյ էլ այդ  
մարդու հետ ազգական ես դառնում։ Միայն պէտք է  
ազգականդ քեզ յարմար լինի։ Օրինակի համար վեր-  
ցնենք հէնց մեր վաճառական Ասկեարին։

Սլբ. Բեկ. — Ո՞վ է այդ Ասկեարը։

Սլ. — Ճիշտ է, դու նրան ծանօթ չես, բայց նրա  
հօրը լաւ ես ճանաչում, հանգուցեալին վաճառական  
Մուրսալի էին ասում, որ լաւ մարդկանցից մէկն էր։

Սլբ. Բեկ. — Սյո, լաւ էի ճանաչում, իսկապէս  
հանգուցեալը շատ լաւ մարդ էր, ի՞նչ է ասում այդ  
Ասկեարը։

Սլ. — Ասկեարի ասածը այն է բէկ, որ ուզում է  
քեզ հետ ազգական դառնալ։

Սլբ. Բեկ. — Բայց չէ որ Սիւլէյման իմ աղջիկս  
դեռ երեխայ է։

Սլ. — Չեմ կարծում որ բէկ երեխայ լինի, միեւնոյն  
ժամանակ լաւ խմացիր որ Ասկեար ուրիշ մարդ է և  
ես կը կարծեմ որ քեզ համար մի այնպիսի մարդու ազ-  
գականութիւնը շատ օգտակար կը լինի։

Սլբ. Բեկ. — Ես իսկապէս ասած, Սիւլէյման, վա-  
ճառական դասը աւելի եմ գերադասում քան թէ ինժի-  
նէր - մինժինէր, դօխտուր - մօխտուր, ատմաքաթ -  
մատվաքաթ, նուչիդէլ - մուչիդէլների հետ ես գործ  
չեմ կարող ունենալ և չեմ էլ սիրում, միայն մի բան  
կայ, որ Ասկեարին ես չեմ տեսել, թէեւ գիտես որ  
հայրը լաւ մարդ էր և մեծ էլ կարողութեան տէր էր.  
բայց յաճախ պատահում է, որ լաւ մարդիկ վատ որդիք  
են ունենում։

Սլ. — Ո՞չ, բէկ, Ասկեարը խելացի և լաւ տղայ է,  
և ես խնդրում եմ, որ ինձ վստահանաս ու խօսքերիո  
հաւատաս և եթէ իսկապէս Ասկեարը վատ մարդ լինէր  
միթէ քու աղջիկը կը խնդրէի՞ նրա համար։

Սլբ. Բեկ. — Եթէ այդպէս է համաձայն եմ, Աստ-  
ուած շնորհաւոր անէ։

Ալ. — (Զեռքը բռնելով) Աստուած երկուսին էլ  
բախտաւորեցնէ, որդիերանց տէր դառնան:

Սլք. բէկ. — (Վեր կենալով) Հիմի համմեցէք միւս  
սենեակը, թէյ խմենք և թէ խօսակցութիւն շարու-  
նակենք: (Գնում են):

Աս. — (Ներս է մտնում) Աստուած վկայ կեանքու-  
մս այսպիսի գեղեցիկ տղայ չէի տեսել, այս դրան ճեղ-  
քից մէկ անգամ էլ նայեմ . . . Ես էլ տղին եմ սիրե-  
լու, Գիւլզօհրա լակոտի մէկին սիրահարւելուց յետոյ,  
ես ինչո՞ւ բէկի տղի նման մի երիտասարդի չի սիրա-  
հարւեմ:

Այն ո՞վ էր եարաք

Սիրս ինչո՞ւ այսպէս ժիւրեց

Աղաջում եմ քեզ Տէր իմ,

Ա'խ, ա'խ, ա'խ, այրւում եմ:

(Պարելով հեռանում է)

Թէլ. — (Ներս մտնելով) Լաւ է որ հիւր եկաւ,  
ինձ աղայիս ճեռքից ազատեց, թէ չէ նորից կը սկսէր,  
«այստեղ տրորիր, այստեղս շփիր»: Օ՛ֆ, բոլորովին  
զահրաս տարաւ էլի: Եթէ մէկը լինէր, առնէր ինձ և  
աղայիս ճեռից ազատէր:

Եկ իմ սիրած քեզ եմ սպասում

Գիշեր ցորեկ մտածում եմ

Աղի արտասուբներ քափում

Այրւում եմ, բայց քեզ չեմ տեսնում:

Ի՞նչ կը լինէր յանկարծ գայիր

(Ներս է մտնում Վէլին)

Էրւած սրտիս նար բերեիր

Զեռքից բռնած տուն տանեիր

Սիրուն Թէլիի ինձ ասէիր:

Ես ել կրծքիդ փաթաթւեի

Ծիծաղեի, արտասուեի

Քո Թէլիիին ես քեզ ասէի

Մատմառ կրծքիդ ես փարւեի:

Կա

Դու

Վել. — Սուլթան բէկի տունը սա՞ եա;  
Թէլ. — Այո, աս է, ի՞նչ ես ուզում:  
Վել. — Զեր տնում զոնախ կա՞յ,  
Թէլ. — Այո, կայ, ի՞նչ է,  
Վել. — Լաւ բա իսի՞ ես շարանում:  
Թէլ. — Բայց դու ո՞վ ես,  
Վել. — Ես էն տան քիլիմջին եմ, (Մեկուսի) Բայց  
հիանալի աղջիկ է, երեւի էս տան աղախինն է,  
Թէլ. — Քիլիմջին ի՞նչ բան է,  
Վել. — Քիլիմջի . . . Բա դու ասա ինձ սիրե-  
ցի՞ր, դու ո՞վ ես:  
Թէլ. — Ես տանն աղախինն եմ,  
Վել. — Ես էլ էն տան ծառան եմ,  
Թէլ. — Ո՞ր տան,  
Վել. — Հէնց էն տան,  
Թէլ. — Վա՞յ, կարծես այս տղան գժւել է:  
Վել. — Ինչի՞ գիտ պիտի լինեմ մարալս,  
Թէլ. — Ես մարալ չեմ,  
Վել. — Դու ինձ համար մարալ ես, մարա՛լ,  
Թէլ. — Դէ՛, ասա տեսնեմ ի՞նչ ես ուզում:  
Վել. — Քեզ եմ ուզում մարալ ջան, քե՛զ: Հաս-  
կացա՞ր:

Հըլէ ինձ համար մարալ ես,  
Ես քու աշերիդ մատաղ  
ի՞նչ կը լինի ինձ եար ըլլես  
Ես քո ծամերիդ մատաղ:  
Թէլ. — Դու ինձ համար մարալ չես,  
ի՞նչ ես ուզում ինձանից,  
Լաւ այն է որ հեռանաս  
Ուր որ է կուզայ աղէս:

(Պար)

Վել. — Աչքիս լոյսը, գնա էն հիւրին ասա, մի  
դուրս գայ, էն մի երկու ջուղար խօսք ասեմ էնա ըլի

գնա (Թէլլի դուրս է զնում) : Գնա մարալս . գնա ջէյ-  
րանս , գնա : Հիանալի աղջիկ է , թող աղաս բէկի  
աղջիկ առնի , ես էլ սրան եմ առնելու , թող երկուքիս  
հարսանիքը մի օրում լինի : (Ներս են մտնում Սուլթան  
բէկ եւ Սիւլիյման):

Ալ. — Ա՛ , դո՞ւ ես Վէլի , իմացայ թէ ինչո՞ւ ես  
եկել , բէկ առայժմ ցտեսութիւն :

Ալթ. բէկ. — Ցտեսութիւն , գնաս բարեւ : Աղջի  
թէլլի , Գիւլզօհրային և Ասեախին ասա թող այստեղ  
գան : Աղջկանս էլ ասեմ , տեսնեմ ի՞նչ է ասելու : (Յերս  
է մտնում) Աղջիկս , ինչո՞ւ այդպէս տիսուր ես , ի՞նչ է  
պատահել , հիւանդ խօ չե՞ս :

Գիւլ. — Ո՞չ հայրիկ , լաւ եմ :

Ալթ. բէկ. — Շատ լաւ , աղջի'կս , գիտե՞ս ինչ կայ :

Գիւլ. — Ո՞չ հայրիկ :

Ալթ. բէկ. — Եթէ չես գիտեր , ուրեմն գիտեիր որ  
քեզ ուզում եմ ամուսնացնել :

Աս. — (Մեկուսի) Ափսոս , տղան ձեռքիցս գնաց :

Գիւլ. — Հայրիկ , ի՞նչ իմ ամուսնանալու ժամա-  
նակն է :

Ալթ. բէկ. — Շատ լաւ ժամանակդ է , երեխայ խօ  
չէս , ամէն բան գիտես , ամէն բան հասկանում ես :  
Քեզ մի այնպիսի վաճառականի եմ տալիս , որ թէ  
հարուստ և մեծ կարողութեան տէրէ :

Գիւլ. — Հայրիկ , չբարկանաս , ես չեմ ուզում  
ամուսնանալ . . .

Ալթ. բէկ. — Տես , մի յիմարանար , ես միջնորդին  
խօսք տուի գնաց :

Աս. — Փառք Աստուծոյ , եկող տղան միջնորդ է

եղել :

Գիւլ. — Ո՞չ , հայրիկ , ես չեմ ուզում ամուսնանալ :

Ալթ. բէկ. — Լա՛ւ , լաւ , նազ մի անի , գիտեմ որ  
չ տով ուրախ ես :

Գիւլ. — Ոչ հայրիկ, ճշմարիտն եմ ասում, որ ես  
չեմ կամենում ամուսնանալ: Ուզում ես ինձ խփիր,  
սպանիր, միայն մի ամուսնացնիր:

Սլբ. Բեկ. — (Զայրանալով) Դու ճշմարի՞տ ես  
ասում: Այդ ի՞նչ յիմար խօսք է: Ի՞նչպէս թէ ամուս-  
նանալ չես ուզում, տո՞ւնը պիտի մնաս, չէ՞ ես պարապ  
մարդ նայող չեմ:

Գիւլ. — (Լալով) Ես մարդու գնալ չեմ ուզում:

Սլբ. Բեկ. — Ինձ նայիր, մի գժւի, դու խօսելու  
ի՞նչ իրաւունք ունես, երբ հայրդ քեզ ամուսնացնէ  
դու պարտաւոր ես հնազանդւել:

Աս. — Ի հարկէ, որ այնպէս է:

Գիւլ. — Ես չեմ ուզում ամուսնանալ:

Սլբ. Բեկ. — Այդ քո գործը չէ, ի՞նչպէս կարող ես  
չամուսնանալ, ամուսնացիր. իսկ եթէ շատ էլ դէս ու  
դէն անես, ականջիցդ կը բռնեմ ու պատին կը գամեմ:  
(Գիւլզօհր լալիս ե իսկ Սուլբան բեկ բարկացած ման  
գալիս լետոյ մեղմացած): Աղջիկս չինի՞ դու կարծում  
ես քեզ վատ մարդու եմ տալիս, չէ, ես քեզ այնպիսի  
մարդու եմ տալիս որ կարծես թագաւորի զաւակ լինի:

Գիւլ. — Հայրիկ, Աստուած վկայ, ես չեմ ուզում  
ամուսնանալ: Թող ինձ, որ տանը մնամ:

Սլբ. Բեկ. — Աղջիկս, մի հակառակիր հօրդ խօս-  
քերին, հնազանդիր, ապա թէ ոչ Աստուած քեզ կը  
պատժէ: Այս ալ իմացիր որ իմ խօսքս խօսք է, ես այն  
մարդուն խօսք եմ տուել, այսօր վաղը նշանդ կը տան,  
քեաբինը կը կտրեն: Հարսանիքը կը լինի, մարդուկը  
գնաս, ամուսինդ էլ հարուստ, ինքը լաւ մարդ, տան  
ու երախաների տէր կը լինես, ես էլ սա ծեր օրերիս  
քիչ մը կը հանդստանամ . . . Քեզ ինչ որ ասում եմ,  
դու իմ խօսքերին լսիր:

Գիւլ. — Հայր, եթէ ուզում ես որ ամուսնանամ,  
այն ժամանակ թող որ ես իմ ուզածին առնեմ:

Սլր. բեկ. — Աղջիկս, ո՞վ է քու ուզածդ, ասա  
առեսնենք:

Գիւլ. — Ինձ զցեց այս դարդերի մեջ  
Արշին մալ ալան  
Հալ չը մնաց իմ սրտիս մեջ  
Այրւում եմ:

Զօր ու գիշեր մտածում եմ  
Արշին մալ ալան  
Եւ կարծես թէ երազում եմ  
Տանջում եմ:

Քեզ տեսնելուս պէս սիրեցի  
Արշին մալ ալան  
Օրեցօր խելագարւեցի  
Մաւում եմ:

Սլր. բեկ. — Աղջիկս, արշին մալ ո՞վ է . . .  
(Մեկուսի) Չլինի թէ մօրաքրոջ հետ եկող տղան է:  
Գիւլ. — Եթէ ես ամուսնանալու լինեմ, միայն  
նրան կը գնամ:

Սլր. բեկ. — Այդ ի՞նչեր ես դուրս տալիս, յիմար  
աղջիկ, մի բազարի լակոտի հետ պիտի ամուսնանա՞ս,  
խելագարւե՞լ ես, Աստուած վկայ այնպէս կը հասցնեմ  
որ ատամներդ բերանդ կը թափւեն: Սուլթան բէկի  
աղջիկը մի լակոտի վրայ սիրահարուի՛, բա՛հ, բա՛հ,  
աղջիկը մի լակոտի վրայ սիրահարուի՛, բա՛հ, բա՛հ:  
Հիմա իմացայ թէ ինչու չես ուզում ամուսնա-  
բա՞հ: Բայց լաւ իմացիր, եթէ այս յիմարութիւնը եր-  
նալ: Բայց լաւ իմացիր, երդուում եմ հօրս գերեզմանով, քեզ  
կար շարունակուի, երդուում եմ հօրս գերեզմանով, քեզ  
մի այնպիսի հարսանիք կը սարքեմ, որ հօրդ հարսա-  
նիքը մտաքերես: Դու ի՞նչ իրաւունքով ես արշին  
նիքը մտաքերես: Դու ի՞նչ իրաւունքով ես արշին  
մալչուն երեսին նայել: Թող, մի թող այդ արշին  
մալչին իմ աչքիս երեւայ . . . Լաւ իմացիր որ ինծի  
Սուլթան բէկ կ'ասեն: Ես անպատութիւն չեմ կարող  
տանել, քեզ էլ կ'ոպանեմ, նրան էլ կը սպանեմ:

Թիւլ. — Հայրիկ, Աստուած վկայ սպանիր ինձ:

Սլք. բեկ. — Պիտի սպանեմ: Այս փափախը ինձ հարամ լինի, որ եթէ մի անդամ էլ արշին մալ ալանի անունը բերանդ առնես, քեզ կտոր կտոր կ'անեմ: Այսպիսի անպատուութիւն կը լինի՞ որ իմ աղջիկս սիրահարւի մի լակոտի վրայ: Վեր կաց, չուտ կորիր աչքիս առաջից, կորիր անպատիւ աղջիկ: (Գիւլզօհրա գնում է Ասեաին): Արշին մալ ալան երբ էր եկել այստեղ:

Աս. — Աստուած վկայ չգիտեմ:

Սլք. բեկ. — Ինչպէս թէ չգիտես, ասում և թաղցնում էք ինձանից: Դուք էլ կորէք այստեղից: (Ասեա եւ Թէլլի գնում են) Ի՞նչ զարմանալի փորձանք եկաւ գլխիս: Շանը մէկը գալիս է իմ տունը և աղջկան սիրտը գրաւում, այսպէս էլ անպատուութիւն կը լինի: Հիմա եմ հասկանում թէ ինչո՞ւ խալային փոխարէն աղջիկս էր ուզում: Թող կորչի գնա, ինչ անենք որ խալան հաստ է, հաստ ու բարակ մէկ գին է: Աղջիկս կատարեալ գժւել է: Պէտք է շտապել, ամուսնացնել որ գնայ, եթէ ոչ այս գործից փորձանք գուրս կը գայ: Եթէ Սիւլէյմանին տեսնեմ, պիտի ասեմ որ իմաց տայ Ասկեարին, որ գայ աղջկանս փախցնէ, որովհետեւ, ինչպէս երեւում է, աղջիկս յօժար կամքով նրան չի պիտի գնայ, իմ ալ բարկութիւնը կը բռնէ ու կուտամ կը սպանեմ: Աղջի Ասեա, թէլի այստեղ սկէք: (Մընում են) Տեսէք ես բազար եմ գնում, Գիւլզօհրան խելքը թող գլուխը հաւաքի, թէ չէ բոլորիդ էլ կը կոտորեմ: (Գնում ե):

Թ. Ա. — Բայց մենք ալ արդէն մէկ-մէկ մեր գլխի ճարը նայել ենք: (Ծիծաղ):

Աս. — Աղջի գնա Գիւլզօհրային այստեղ կանչի: Տեսնում էք այդ աղջկայ յանդգնութիւնը, ուղղակի հօր երեսին ասում է, թէ սիրահարւած է արշին մալ չուն: Այս աղջիկը կատարեալ փորձանք դարձաւ մեր

**ՊԼԻՒԻՆ:** (Գիւլզօհրա մտնում է եւ ընկնում քախրի վրայ):

**Ա. Թ.** — Բաւական է լաց մի լինիր  
ինչ պատճառով, ո՞ւմ համար,  
Միքէ հօրից լաւ կը լինի  
Արշին մալչին քեզ համար:

**ԳԻՒԼ.** — Զեռքիս իրաւունքներ չունեմ  
Ումնից խնդրեմ օգնութիւն,  
Հայրս դեպի ինձ խիղն չունի  
Այս ինչ անասուածութիւն:

**Ա. Թ.** — Ասիր, խօսիր, ուրախ եղիր,  
Քեզ չի սազի ժիրութիւն  
Ինչպէս մենք ենք այնպէս եղիր  
Որ ձեռքս բերե լաւ անուն:  
(Վարագոյր)

### Դ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

(Բեմը ներկայացնում է Ասկեարի տունը  
Կահաւորուած սենեակ)

**Ասկ.** — Ի՞նչ փորձանքներ բերի խեղճ Գիւլզօհրայի  
**ՊԼԻՒԻՆ:** Խեղճ աղջիկը ինքը այնպէս է հաւատացած,  
որ իրան ուրիշին հետ են ամուսնացնում: Բայց զար-  
մանալի հաստատամիտ աղջիկ է, յօժար կամքով երբեք  
չկամեցաւ ուրիշին հետ ամուսնանալ: Բայց իմ կատա-  
րած գործս ալ զարմանալի էր, չամուսնացայ. չամուս-  
նացայ և վերջ ի վերջոյ այսպիսի խաղերով ամուսնա-  
ցայ և շատ էլ լաւ արի: Այսպէսով հիմա գոնէ տեսած  
ու սիրած աղջկանս հետ կ'ամուսնամ ու աղջիկն էլ  
ինձ կը սիրէ:

Ինքս հարուս վաճառական լինելով  
Դիմամբ օրջիկ չըի վաճառ ես դառայ  
Ու քանի օր փողոցները ման գալով  
Վերջ ի վերջոյ ես իմ ուզածս գտայ:

Եկ, եկ աղաւնեակս, եկ  
Եկ դու իմ հոգեակս, եկ  
Սպասում եմ, շուտ արա  
Այրում եմ, շուտ եկ, եկ, եկ:

Գնամ, տեսնամ, խայաս պատուէրներս կա-  
տարելէ թէ ոչ:

(Գնում է, քիչ յետոյ դրսից ձայներ են լսում, մի  
քանի սղերք Գիւլզօհրան ներս են զցում սենեակ ու  
դուռը փակելով զնում են. Գիւլզօհրա լալով բնկնում  
է բազկարոսի վրայ):

Գիւլ. — Տէր Աստուած միթէ սա երազ է՝, միթէ  
ես պիտի գնամ իմ չսիրածին, ինձ բռնութեամբ  
ամուսնացնում են, ինձ բաժանում են իմ սիրածից և  
չգիտեմ, ո՞ւմ են տալիս: Ես չեմ ուզում հարստու-  
թիւն, ես իմ սիրածին եմ ուզում: (Երեսը ծածկելով  
լալիս է եւ երգում):

Եարաբ ի՞նչ մեղք էի գործել  
Որ ընկայ այս տանջանքին մէջ  
Աղաոչւմ եմ քեզ Աստուած իմ  
Շուտ ազատիր կամ տուր ինձ վերջ:  
Միքէ ես նրան սիրելով  
Գործեցի ես մի մեղք  
Աղաչում եմ քեզ Աստուած իմ  
Շուտ ազատիր կամ տուր ինձ վերջ:

Ես այլեւս չեմ կարող սպասել, աւելի լաւն այն է  
որ ինքս ինձ սպանեմ, կամ խեզդւեմ՝ ազատեմ: (Իր  
շարփը ոլորում է, որ ինքն իրան խեղդէ, բայց այդ  
միջոցին արշին մալ ալանի ձայնն է լսում. զարմացած  
ականջ է դնում, եւ այդ ձայն նրանք ուրախացնում է):

Ասկ. — (Բեմի ետեւից) Արշին մալ ալան (մտնում է)

Գիւլ. — Զարմացած նայում է) Դո՞ւ ես թէ ուրին է:

Ասկ. — Ես, ես եմ, Գիւլզօհրա, հանգիստ եղիր:

Գիւլ. — Տեսնում ես գլխիս ի՞նչեր բերին, եթէ  
քիչ էլ ուշանայիր, ինքս ինձ խեղդած պիտի լինէի:  
Բայց դու ո՞րտեղից եկար այստեղ: Եթէ կարելի է,  
փախչենք այստեղից:

Ասկ. — (Ծիծաղելով) իմ տնից ո՞ւր փախչինք:

Գիւլ. — Ի՞նչ ես ասում, այս ո՞ւմ տունն է:

Ասկ. — Այս իմ տունն է, որ յետոյ քո տունը  
պիտի լինի:

Գիւլ. — Ի՞նչ ես ասում, ես չեմ հասկանում: Ո՞վ  
էր ինձ փախցնողը:

Ասկ. — Այդ մարդկանց ես էի ուղարկել:

Գիւլ. — Ելի չհասկացայ: Ի սէր Աստուծոյ, ինձ  
բացատրէ այս կատակը:

Ասկ. — Լսիր, Գիւլզօհրա, քեզ սիրահարուած  
արշին մալչին ես եմ, այն վաճառականը, որին հայրդ  
կամենում էր քեզի տալ, դարձեալ ես եմ, ես դիտ-  
մամբ արշին մալչի դարձայ որպէս զի աղջկան տեսնեմ  
եւ առնեմ եւ վերջապէս քեզ դժայ: Հօրիցդ ուզեցի,  
նա էլ տուեց, բայց հայրդ էլ չէր իմանում, ող ես  
արշին մալչին եմ, որովհետեւ նա չէր տեսած, բայց  
հօրս կողմանէ լսել ու ճանաչել է:

Գիւլ. — Անխիղճ, զու ինձ չի խղճացի՞ր: Քիչ էր  
մնում որ հայրս ինձ սպանէր, և յետոյ ես ալ ուզում  
էի վերջ տալ իմ կեանքին: Եթէ գիտնայի թէ այդպէս  
ես, քեզ չէի սիրի:

Ասկ. — Դէ հիմի գնանք մէկ-մէկ բոլոր սենեակ-  
ները ցոյց տամ խալայիս էլ տեսնենք: (Գնում են):

Սլք. քէկ. — (Մտնելով) Ելի հօր սիրտ է, չկարո-  
ղացայ համբերել, ասացի գնամ տեսնեմ, չինի աղջիկս  
գլխին մի փորձանք բերի, բայց ո՞ւր են, մարդ չի  
երեւում, (Ափին խփելով) է՛յ, ով կայ այդտեղ:

Ասկ. — (Մտնում է) Բարեւ Սուլթան բէկ, բարի  
եկաք:

Սլր. բեկ. — (Զարմացած) Տղայ, դու Ասկեա՞րն ես:

Ասկ. — Ո՞չ բէկ, ես Հաճի Մուրսալի տղայ Աս-  
կեարն եմ և ինքս էլ վաճառական:

Սլր. բեկ. — Ասում էի է՛ . . . Միայն աչքիս այն-  
պէս երեւաց, որ մօտս կանգնողը այն լակոտն էր:

Ասկ. — Ո՞ր լակոտը, բէկ:

Սլր. բեկ. — Ոչինչ, մի արշին մալչի կար:

Ասկ. — Հա՛, խմացայ, չինի թէ այն արշին մալ-  
չին՝ որից ուզեցիր դու նրա խալան, իսկ նա խալայի  
փոխարէն քո աղջկանը, իսկ դու նրան դուրս վոնտե-  
ցիր, այնպէս չէ՞:

Սլր. բեկ. — Ասենք թէ այդպէս է, բայց դու ո՞ր-  
տեղից գիտես:

Ասկ. — Ի՞նչպէս չգիտենամ, քանի որ ես ինքս էի:

Սլր. բեկ. — Ի՞նչ ես խօսում:

Ասկ. — Այո՛, այո, ես այնպէս արեցի, որ այդ-  
պէսով աղջկան տեսնեմ, յետոյ ամուսնանամ:

Սլր. բեկ. — Ճշմարի՞տ ես ասում:

Ասկ. — Այս բոպէիս աղջիկդ կը գայ այստեղ և կը  
հաստատէ: Գիւլզօհրա, Գիւլզօհրա, եկ այստեղ:

Գիւլ. — (Հօրը դիմելով) Տեսնո՞ւմ ես հայրիկ, թէ  
քո ուզածը և թէ իմ սիրածը:

Սլր. բեկ. — Հիմի հասկացայ, շատ օյինբազ ես  
եղել, քո հանդուցեալ հայրդ այդպէս չէր: Է՛, ինչպէ՞ս  
ես, լա՞ւ ես . . . Աղջի, Գիւլզօհրա, մօտեցիր: Դուն  
սրան կ'երթա՞ս:

Գիւլ. — Այո, կ'երթամ:

Սլր. բեկ. — Դէ, գնա ճահաննամը: Ճատ լաւ,  
շատ գեղեցիկ, բա քո խալան ի՞նչ եղաւ և իսկապէս  
քո խալա՞ն էր, թէ դա էլ մի օյինբազութիւն էր:

Ասկ. — Ո՞չ, իսկապէս խալաս էր:

Սլր. բեկ. — Եւ ինքն էլ այրի՞ է:

Ասկ. — Այո, այրի է:

Սլր. բեկ. — Դէ՛ բեր, ես էլ նրան առնեմ է՛:  
Ասկ. — Բան չեմ ասում, առ: Գիւլզօհրտ, մի  
խալայիս այս տեղ կանչիր: (Գիլզօհրա գնում է):  
Սլր. բեկ. — Ես էլ նրան առնեմ, նա այրի, ես  
այրի: Բժիշկն էլ որ տեսնէ խալային, անպատճառ  
խորհուրդ կը տայ ամուսնանալ:

Ասկ. — Դէ՛, հիմի հասկացար բէկ, թէ ինչ է  
նշանակում երկու կողմից ազգական լինելը:

Սլր. բեկ. — Իմացայ, ալ օյինբազ. (Ներս են մըս-  
նում խալան եւ Գիւլզօհրան) Դէ՛, արի էլի, առաջ:  
Տեսնում ես, քո այս քրոջ որդին ինչ օյինբազն է  
եղեր: Դէ՛ հիմի ի՞նչ կ'ասես, երեք մանէթ փող, մի  
մոլլա և մի գլուխ շաքար ու գործը պրծնի գնայ:

Խալ. — Ինչ ասեմ, Աստուած չնորհաւոր անի:

Բոլորը. — Ամէն, ամէն:

Սլր. բեկ. — Երեխելքը տունը մինակ եմ թողել  
Ասկեար, ուղարկիր ծառային թող այստեղ գան:

Ասկ. — Այս բոպէիս ուղարկեմ: (Գնում է):

Սլր. բեկ. — Աստուած վկայ, ուրախութիւնից  
կարծում եմ որ բոլորովին ջահիլացայ: (Արագ ընչելով)  
Այսինքն ձեր էլ չեմ, մի կտրիչ տղայ եմ: Կեցցեմ:

Ասկ. — (Մտնելով) Ղրկեցի:

Սլ. — (Ներս է մտնում) Բարեւ ձեզ:

Սլր. բեկ. — Վայ Սիւլէյման, Աստուծոյ բարին է,  
քո այս բարեկամդ ի՞նչ օյինբազն է եղել: Ահազին  
փորձանք բացեց մեր գլխին:

Սլ. — Այս շատ օյինբազն է և չդիտեմ ումնից է  
սովորել այդ բաները:

Ասկ. — Ինչպէս թէ ումնից եմ սովորել, միթէ  
այս բոլորը սորվեցնողը դուն չէի՛ր: Ահա թող խալաս  
ասէ:

Խալ. — Ճիշտ է, ճիշտ է:

Սլր. բեկ. — Այդպէս ուրեմն, Սիւլէյման, ես քեզ

այդպէս չէի կարծում, դու այս բաները ո՞րտեղից եւ սովորել:

Սլ. — Ես եմ հնարել բէկ:

Սլթ. Բէկ. — Այ, քո գլուխդ ապրի:

Սլ. — Հաւ, Գիւլզօհրան սա՞ է:

Ասկ. — Այս, սա է:

Սլ. — Իսկ տեսածս ուրիշ էր:

Սլթ. Բէկ. — Դէ, երեւի Ասեաին ես տեսել:

Լ. — Ասեան ո՞վ է:

Սլթ. Բէկ. — Եղբօրս աղջիկն է:

Սլ. — (Ուրախ) Դէս որ այդպէս է, ես ինչո՞ւ եմ պարապ-սարապ ման գալիս: Արի մի հարսանիք էլ ես անեմ:

Սլթ. Բէկ. — Ճիշտ ես ասում:

Սլ. — Ի հարկէ:

Սլթ. Բէկ. — Տւեցի գնաց:

Բոլոր. — Աստուած շնորհաւոր տնէ: (Կրկնել)  
(Ասեա, Թէլլի եւ Վէլի ներս են մտնում):

Սլթ. Բէկ. — Ահա եկան, աղջի Ասեա, եթէ քեզ  
այս տղին տամ կը գնա՞ս:

Աս. — (Ամաշելով) Այս՝ կը գնամ:

Սլթ. Բէկ. — Դէս, գնա ջահաննամը:

Վէլ. — (Թէլլի հետ միմիեանց նայելով) Ա՛խ, ա՛խ:

Սլթ. Բէկ. — Այ տղայ, այդ ի՞նչ սրտակոտոր ախ  
քաշեցիր, քո դարդը ի՞նչ է:

Ասկ. — Մեր արածը բէկ, անխղճութիւն է, ի՞ն  
դարդ պիտի ունենայ, Գիւլզօհրան ինձ տուիր, Ասեան  
Սիւլէյմանին, խալաս դուն առիր: Թէլլին էլ տուր  
Վէլիին:

Բոլոր. — Ճիշտ է, ճիշտ է:

Սլթ. Բէկ. — Աղջիկ Թէլլի, Վէլիին կը գնա՞ս:

Թէլ. — (համարձակ) Այս, վաղելով կը գնամ:

Սլ. — Վէլի, Թէլլին կ'առնե՞ս:

Վ. Կ.— (Ամաչելով) Այս, կառնեմ: (Ծիծաղում է)

Բոլորը.— Աստուած շնորհաւոր անէ:

Սլք. բեկ. — Հաւ, իսկ երբ սկսենք հարսանիքը:

Բոլորը.— Հենց այսօրուանից:

Սլք. բեկ — Ուրեմն սկսենք, շարուեցէք տեսնեմ: (Զոյգ դոյգ պարում են)

Խմբ. — Մենք հասանի մեր նպատակին

Դուք ել հասեք ձեր մուրազին

Աստուած կեանի տայ մեր Ասկեարին

Պատճառ եղաւ մեզ բոլորիս:

Ասկ. — Շնորհակալ եմ ես ձեզանից  
(կրկ.)

Սիւլեյմանից որ խրատ Տւաւ

Բեկին որ աղջիկը Տւաւ ինձ:

(կրկ.)

Խմբ. — Աստուած կեանի տայ մեզ բոլորիս.

Ալ. — Սուլբան բեկն ալ առողջաժաւ

Որ իր ընտրածին նա առաւ

Ել հիմա մեջքը չի ցաւում

Հաս խալային արժանացաւ:

Վ. Կ. — Բա չեք ասի ես ել դտայ  
Եւ իմ ընտրածին ես առայ  
Իմ Թէլլիին մատաղ լինեմ  
Ես ել արժանացայ

Խմբ. — Խանումը աղաին,

Ասեան Սիւլեյմանին,

Խալան Սուլբանին,

Թէլլիին Վ. Կ.իին,

Ամենիս հասանի մեր մուրազին.

Աստուած կեանի տայ մեացողներին:

(Պար)

(Վարագոյր)

ՎԵՐՋ

# "ԱՐԵՒ" ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

«ԱՐԵՒ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ 1925Ի առաջին օրջանին  
լոյս ընծայեց հետեւեալ գիրքերը.

## ՍԻՐԱՆՈՅՑ

ԱՐԱԲՍԻԱ. կամ ՎԱՐԺՈՒՀԻՆ	Ա. Տիւսաբ	150	Ղ.րշ.
ԵՐԲ ԱՅԼԵԻՍ ԶԵՆ ՍԻՐԵՐ	»      »	100	»
ԱՂՔՍԻՆ ՊԱՏԻՒԾ	Զ. Եսայեան	75	»
ԹԱՊԼԱՔԵԱՐ ՓԻԼԻԿ	Ա. Ալթունեան	150	»
ԵՐԱՆՈՍ ԱՂԲԱՐ	Միասին կազմուած	25	»
ՔԱՄԵԼԻԱԶԱՐԴ ԿԻՆԸ	Ա. Տիւմա Որդի	100	»
ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ	(ԵՐԳԵՐՈՎ միասին)	15	»

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ Է

## ՍԻՄՈՆԷ ԵՒ ԾԱՐԻ

6 ՀԱՏՈՐ 300 Ղ.ՐՈՒՇ

«ԱՐԵՒ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ունի իր սեփական Տպա-  
րանը ուր կը տպագրուին իր հրատարակութիւնները :  
Տպագրական եւ հրատարակչական որ եւ է գործի  
համար դիմել Վարչութեան հասցեին:


B. P. 558 Stamboul

Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Հ. ԿՕՇԿԱՐԵԱՆ

# ՄԱՆՈՒ-ԼԵՍԻ

Ըստ Փրկի





# ԱՐԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

«ԱՐԵՒ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆԻ 1925Ի առաջին տօնականին  
լոյս ընծայեց հետեւեալ գիրքերը.

ՍԻԾԱՆՈՅՑ	Ա. Տիգառը	150 Դր.
ԱՐԱՔՍԻԱ Կամ ՎԱՐԺՈՒՀԻՆ	»     »	100   »
ԵՐԲ ԱՅԼԵՒՄ ԶԵՆ ՄԻՐԵՐ	Զ. Եսայեան	75   »
ԱՂՔԱՏԻՆ ՊԱՏԻՒԼ	Ա. Ալթունեան	150   »
ԹԱՊԼԱՔԵԱՐ ՓԻԼԻԿ ԵՐԱՆՈՍ ԱՂՔԱՐ	Միասին կողմուած	25   »
ՔԱՄԵԼԻԱԶՈՐԴ ԿԻՆԸ	Ա. Տիգառա Որդի	100   »
ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ	(Երգերով միասին)	15   »

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ Է

ՍԻՄՈՆ ԵՒ ՄԱԳԻ

6 ՀԱՏՈՐ 300 ԴՐՈՒՅ

«ԱՐԵՒ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆԻ ունի իր սեփական Տպա-  
րանը ուր կը տպագրուին իր հրատարակութիւնները :

Տպագրական եւ հրատարակչական որ եւ է գործի  
համար դիմել Վարչութեան հասցեին՝

B. P. 558 Stamboul

Յ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ Հ. ԿՕՇԿԱՐԵԱՆ